

838

307

4-32

Ա. ԿԱՐԻՆԵԱՆ

ՕՍԿԱՐ ՈՒԱՅԼԴԻ
„ՀԵՔՏԱԹՆԵՐԸ“

82

4-32

Մ/ՄԿԻԱ—1920

82

4-32

Այ

Ա. ԿԱՐԻՆՅԱՆ

(1007575)

ՕՍԿԱՐ ՌԻԱՅԼԴԻ

„ՀԷՔԻԱԹՆԵՐԸ“

~~1007575~~

ՄՈՍԿՈՎԱ—1920

2003

2011



ՕՍԿԱՐ ՈՒՆՅԼԴԻ

„ՀԷՔԻԱԹՆԵՐԸ“

22.2.88

22508

ՕՍԿԱՐ ՈՒԱՅԼԻԴԻ «ՀԻՔԻԱԹՆԵՐԸ»

2 2425 55 -

Օսկար Ուայլդը ծնւել է 1854-ին:

Նրա հայրը՝ Վիլհամ Ուայլդը համարւել է լայտնի վիրաբուժ և եղել է անգլիական լորդ:

Վիլհամ Ուայլդը չափազանց «տարօրինակ» մարդ էր, որովհետև չէր նմանում ոչ սովորական լորդերին և ոչ էլ բժիշկներին: Անգլիական այդ

*) Կենսագրական տեղեկութիւնները ըստ Օսկար Չուковский. „Оскар Уайльд“ յոդածից:

լօրդը ըստ երևոյթին այնքան էլ մեծ նշանակութիւն չէր տալիս իր «ազնական» կոչումին:

Դա չափազանց անհոգ, շռայլ և հիւրասէր մարդ էր՝ զգզուած շորերով ու անշնորք դիմագծերով:

Տազանդաւոր բժիշկ լինելով հանդերձ, Վիլեամ Ուայլը երբէք չի սահմանափակել իր առօրեայ բժշկական-պրակտիկական գործունէութեամբ: Նա զբաղւել է ստատիստիկայով և ազգադրութեամբ ու գրել է մի շարք լողածներ ամենատարբեր խնդիրների մասին:

Ուայլդի մայրը նոյնպէս ունեցել է «առօրինակ» լատկութիւններ: Իրլանդական շարժումը նա պաշտպանել է միևնոյն եռանդով, ինչպէս և անգլիական արիստոկրատիայի հմայքը: Նա գրել է բանաստեղծութիւններ և թուղթիկներ ու կազմել է մի շարք գրքեր՝ Սկանդինաւիայի, Ֆրանսական և իտալական լեզափոխութեան մասին: Սակայն տաւրօրինակ կերպով Վիլեամ Ուայլդի կինը հաշտեցրել է իր սենտիմենտալ—դեմոկրատական լուղները արիստոկրատական պրետենզիաների հետ: Իր ամուսնու լօրդական նոր տիտղոսը նրա համար նդել է բաւականաչափ հմայիչ: Եւ Ուայլդի մայրը մեծ ուշադրութեամբ հետեւելով պատանի Օսկարի դաստիարակութեան ձգտել է ստեղծել նրանից միանգամայն լիկաւծ, անաղարտ և իսկական մի լօրդ:

Յաջողւել է արդեօք այդ:

Անշուշտ ընտանեկան միջավայրի ազդեցութիւնը որոշ կնիք է դրել Օսկար Ուայլդի վրայ: Նրա արտառովոր էստետիզմը մեծազոյն չափով կազմակերպւել է դեռ պատանեկական շրջանում: Ուայլդը իր հօր նման չէր: Նա հազնւում էր պարզ, բայց չափազանց լաւ: Արտօքին զեղեցկութեանը նա մեծ նշանակութիւն էր տալիս. իւրաքանչիւր մարդ պարտաւոր էր Ուայլդի տեսակէտով զեղեցիկ հագնւել...

Եւ Ուայլդի բոլոր հերոսները միշտ դուրեկան և զեղեցիկ են: Նրանք ունեն զեղեցիկ զգեստներ և սիրում են զեղեցկութիւնը: Իրական կեանքը անքնդունելի էր Օսկար Ուայլդի համար:

Իրական կեանքի կոշտութիւնը խափանելու նպատակով նա ստեղծում է ֆանտաստիքական տենչերի մի խիտ ցանց, նկարագրում է միշտ արտասովոր և զեղեցիկ հետուներ...

Այդպէս է Ուայլդը իր այնքան յայտնի «Դօրեան Գրէյի Պօքտրէտ» վէպի մէջ:

Պարագօքսներով լեցուն այդ վէպը բնորոշում է Ուայլդի էստետիքական ամբողջ աշխարհայեցողութիւնը:

Եւ միանման պարագօքսներով լի են նաև նրա մնացեալ գործերը: Չնայած դրան Ուայլդի բոլոր հերոսները՝ և՛ Դօրեան Գրէյը, և՛ Սալոմէն, և՛ Լէդի Վինդէրմիրը միանգամայն իրական դէմքեր են, որոնք բոլորն էլ ունին իրական մարդկային

տենչեր և յոյգեր: Ուայլդի մեծ ոլժը հէնց նրանումն է, որ նա կարողանում է իրական դարձնել ամենատարօրինակ ձգտումներն և տենչերը: Նրա Մալոմէն այլ կերպ չէր կարող լինել:

Նրա Դօրեան Գրէյը իրական է էր բոլոր տարօրինակութիւններով հանդերձ: Նրա Լորդ Արտուրը բնական է և «խական»:

Մի՞թէ «տարօրինակ» չէր հէնց ինքը—այդ արտասովոր պարադօքսների և ֆանտաստիքական դրուագների հեղինակը:

Արհատկրատական էստետիզմի այդ երկրպագուն միաժամանակ էր նաև սօցիալիզմի, ապագայ սօցիալիստական հասարակարգի ջատագով: Ինդիվիդուալիզմի ամենացայտուն այդ ներկայացուցիչը դառնում է միաժամանակ խեղճների և տառապողներին երգիչ:

Ինչպէ՞ս բացատրել այդ հակասութիւնը: Ուայլդի կենսագրողներից մէկը, Չուկոփսկին տրամադիր է կարծելու, որ Ուայլդի բոլոր հակասութիւնները մեծագոյն չափով կապած են նրա անցեալի հետ: Արդէն մանկութիւնից նա, ստացել է որոշ ժառանգութիւն: Եւ ելնելով այդ հիմնակէտից ռուսական իմպրեսսիօնիստ-քննադատը հմտօրէն և տաղանդաւոր կերպով նկարագրել է անգլիական մեծ գեղագէտի բարդ կենդանագիրը:

Սակայն նրա քննութիւնը հետաքրքրական չինելով հանդերձ ամենին չի բացատրում Ուայլդի

իւրօրինակ «սոցիալիստական» տենչերի իրական պատճառը: Ռուսական քննադատի համար Ուայլդը ժամանակից և սոցիալական միջավայրից կտրւած մի անհատ է միայն:

Այնինչ սոցիալական ուրոյն միջավայրը թողել է իր ինքնայատուկ դրոշմը Ուայլդի ստեղծագործութեան վրայ: Եւ հէնց այդ միջավայրն էլ ստեղծել է անգլիական մեծ գեղագէտին:

Իր ապրումներով Ուայլդը մօտ չի եղել ո՛չ անգլիական բուրժուազիային և ո՛չ էլ պրոլետարիատին: Նրա համար օտար են եղել անգլիական արհեստրատիայի զոռոզ դէմքը և դատարի հոգին, արգինարեւական բուրժուազիայի ազան և դրամատենչ ձգտումները: Սակայն նա երբէք չի կաւորացել ըմբռնել և հասկանալ նաև պայքարող ու մարտնչող պրոլետարիատի իդէալը:

Ուայլդը գրել է մի քանի չափազանց ընդունելի յօդածներ և ղիտոգումիւններ: Այդտեղ նա ամենատուր կերպով խարազանել է հին աշխարհի խարխուլ իդէոլոգիան: Նա նկարել և երգել է նոյնիսկ սոցիալիզմը:

Սակայն այդ սոցիալիզմը նկարագրւել է չափազանց իւրօրինակ կերպով: Ուայլդի տեսակէտով սոցիալիստական աշխարհում անհատը պիտի վայելի լիակատար ազատութիւն: Այլ կերպ երևակայել սոցիալիզմը նա անկարող է:

Ուայլդը ինքը ինտելիգէնտ է բառիս բուն իմաս-

տով: Եւ որպէս մի ինտելիգէնտ, որ կապած է բուրժուական հասարակարգի հետ, որ ստացել է այդ կարգերից որոշ ժառանգութիւն, որոշ տրադիցիաներ և սովորութիւններ նա չի կարող կտրել զրանցից վերջնականապէս: Նա ցանկանում է, որ ապագայ հասարակութիւնը տալ նրան բոլոր վայելքը, բոլոր գեղեցկութիւնը առանց այն աշխատանքի, որին նա ընդունակ և սովոր չէ:

Իհարկէ Ուալլը խորապէս հատառցած է, որ այդպէս է նաև համայն պրոլետարիատի, բոլոր աշխատաւորութեան երազը: Ուալլը կուող, գործարանային ընկերներին չի տեսել: Նա տեսել է միայն ցնցոտիների մէջ պարուրած միշտ խեղճ աղքատներին և թշուառներին, այլ ոչ այն ուժեղ զարրիներին և մարտիկ-հանքահաններին, որոնց երգել են մեծ պօէտ՝ Վէռնարէնը և մեծ բանդակագործ Մէօնիէն...

Ուալլը մօտեցել է սոցիալական խնդրին, որպէս բուրժուադիալից կտրած քաղքենի ինտելիգէնտ: Այդ կողմից նա յիշեցնում է անգլիական այն ինտելիգէնտներին որոնք դասակարգային ներհակութիւններին վերջ տալու համար դիմում են ախրողներին, և զրանց վեհանձնութեանը ապահովում: Այդպէս է անգլիական սոցիալիստական այսպէս կոչւած «Քարիանական ընկերութիւնը»: Այդպէս էր նաև անգլիական լայտնի սոցիալիստ-ուտօպիստ Վիլիամ Մօրրիսը, որը Նոյնպէս ստեղծել է սոցիալիստա-

կան հասարակարգի մի զարդանկարած պատկեր...

Ուալլը կապւած է հէնց այդ ինտելիգէնտների, տիրողների, զաւակների, նախկին բուրժուաների, իրենց դասակարգային մեղքերը «քաւող» բուրժուաների հետ:

Նկատելով աշխատաւորների տանջանքը և թշուառների տառապանքը անգլիական այդ ինտելիգէնտները հեռանում և կտրում են իրենց «հայրեր»-ից և «քաւում» են իրենց հայրերի «մեղքերը»:

Այդ կողմից ակնարկած սոցիալիստները յիշեցնում են ռուսական նարօդնիկներին, որոնց շարքերում Նոյնպէս ուժեղ էին այն ինտելիգէնտները, որոնք գործելով ժողովրդի համար «քաւում» էին իրենց «հայրերի» դասակարգային «մեղքերը»...

Էստէտ Ուալլը, արիստոկրատ և դէնդի Ուալլի հոգու մէջ ևս կար այդ զգացումը, այդ ինքնանակ էթիքական կենսահայեցողութիւնը, որը այնքան ինքնայատուկ զոյներով արտացոլւել է նրա առաջին «Հէքիաններ»-ում...

Այդ «Հէքիաններ»-ը լոկ մանկական հէքիաններ չեն:

Ուալլը ստեղծել է գեղարեստական այնպիսի զրուագներ, որոնք ֆանտաստիքական լինելով հանդերձ, չափազանց պարզ են և հասարակ: Բայց այդ

պարզութեան մէջ կայ իւրօրինակ ոլմ: Իզուր չէ
ասած, որ պարզ գրելը ամենազոռար արեւստն է:

«Դօքեան Գրէլի» ստեղծագործողը («հէքիաթ-
ներ»)-ում անելի ինտիմ է, անելի մտերիմ և ան-
կեղծ: Այդտեղ նա կարծես քաց է անում, մերկա-
ցնում է իր հոգու ամենանւիրական անկիւնները:

Եւ մենք տեսնում ենք, որ «էստէտ» և «արիս-
տոկրատ» Ուալլըը հին աշխարհի փարիսեցիական
մօրալի ամենամեծ հակառակորդն էր, որ նրա հա-
մար («մաքուր գեղարեւատը») սրբութիւն սրբոց չէր,
որ նա խոր զգացումով էր դիտում ճնշւած տար-
րերի ծանր կեանքը:

«Երջանիկ Պրինցը» և «Սոխակն ու Վարդը» —
այդպէս են կոչում նրա առաջին ժողովածուի հիմ-
նական դրուագները: Պրինցի («ղէմոկրատներին»)
Պարոյ եւ սարսափեցնել այդ վերնագրները:

Սակայն նա ով կմօտենայ անելի մօտ «Հէքիաթ-
ներ»-ին կտեսնէ, որ Ուալլըի բոլոր այդ ֆանտա-
ստիկական էսկիզները ունին իրենց որոշ իմաստը,
իրենց հիմնական իդէան... Այն, ինչ որ ասում է
առաջին գլխում — յետադայ հէքեամներում ևս դրում
է այլ և տարբեր ձեւակերպումներով...

Սեղմ ու հատու լնջով անգլիական մեծ գեղա-
գէտը նկարում է («Երջանիկ Պրինցի») այն ձոխ
արծանը, որը փայլում էր իր աղամանդներով և
ճանկազին քարերով: Գեղեցիկ էր համարում այդ
արծանը բոլորի կողմից...

Սակայն ահա մի առ մի աղատում է պրինցը
իր արդուզարդից: Մի առ մի, կտոր-կտոր քանդում
է նա իր բոլոր զարդարանքները խեղճերին և տա-
ռապողներին օգնելու համար:

— «Երբ ես կենդանի էի, և ունէի մարդկային
սիբտ, ես չգիտէի, թէ ի՞նչ է արտասուքը, որով-
հետեւ ես թաքում էի անհոգ ապարանքում, ուր
վիշտը մուտք չունէր: Տերեկները ես խաղում էի
իմ ընկերների հետ այդու մէջ, իսկ երեկոները՝
ղեկավարում պարերը Սեմ Սրահում: Այդու շուրջը
բարձր պատնէշ էր քաշած, և ես երբէք չհետա-
քրքրուեցի հարցնել՝ ի՞նչ կար նրա լեռներ՝ շուրջս
ամեն ինչ այնքան սքանչելի էր»...

Այդպէս էր «Երջանիկ Պրինցը» առաջ:

Բարձր պատանդանից դիտում է նա մեծ քաղաքի
կեանքը, տեսնում է իր քաղաքի բոլոր այլադակու-
թիւններն ու թշառումիւնները և նրա սիրտն
այրում է...

Ու նա համոզում է ղէպի հեռու հարաւային եր-
կրները սլացող ծիծեռնակին օգնել իրեն, բանդել
մի առ մի իր զգեստը և օգնութիւն հասցնել տա-
ռապողներին...

Եւ կատարելով այդ խնդիրը վեհանձն ծիծեռնակը
գոհում է...

... «Մինչև լոյս նա նստեց Պրինցի ուսերի
վրայ ու պատմեց՝ ինչ տեսել էր օտար երկրնե-
րում: Նա պատմեց նրան կ. րմիր իրիւններից, որոնք

երկար կարգերով ջարոււմ են ներսի փերին ու կտուցներով ռսկէ ձկնիկ որոնում. սֆինքսից, որը հին է, ինչպէս ինքը՝ աշխարհն ու ապրում է անպատում ու զիտէ ամեն ինչ. վաճառականներից, որոնք քայլում են հանդարտ իրենց ուղտերի հետ, սամէ տէրողորմեան ձեռներին. Լուսնէ Լերան Թագաւորից, որը սե է, ինչպէս երենոսի փայտը, ու երկրպագութիւն է տալիս մի խոշոր բիրեղի, կանաչ մեծ օձից, որ քնել է արմաւնու վրայ ու քսան քուրմ է պահում, որ իրեն մեղրահաց տան. Թզուկներից, որոնք նաւորդում են մեծ լճի մէջ, խոշոր, տափակ տերեւների վրայ նստած ու միշտ կռիւ մղում Թիթեռնիկների հետ...

— Միրուն, փոքրիկ ծիծեռնակ, ասաց Պրինցը,— դու ինձ պատմում ես զարմանալի արարածներից, սակայն ամեն ինչից աւելի զարմանալին՝ մարդկային տառապանքն է. Աւելի մեծ խորհուրդ, քան Թշառութիւնն է, գոյութիւն չունի: Սաւառնիւր, իմ քաղաքի վրայով, փոքրիկ Ծիծեռնակ, ու պատմիր ինձ բո տեսածը:

Ու սաւառնեց Ծիծեռնակը մայրաքաղաքի վրայով ու տեսաւ հարուստներին զարձանալիս իրենց սրանջիւի ապարանքներում, մինչդեռ աղքատները նստել էին դարպասների առաջին. Նա Թռաւ նեղ փողոցներն ու տեսաւ անօթի երեխաների զունատ դէմքերը՝ անտարբեր դէպի մութ փողոցները լաւած աչքերով...

Ոչ մի հրապարակախօսութիւն, ոչ մի «քաղաքացիական» բանաստեղծութիւն չի կարող ունենալ այն իւրօրինակ աղիւցումները, ինչ որ ունի Ուայլդի այլ հէքիաթը:

Այդտեղ աւելորդ խօսքեր և կեղծ շեշտեր չկան: Բացակայում է այն սենտիմենտալ շաղակրատութիւնը, որի ամենամեծ սրբահարներն են հայ նորագոյն բանաստեղծներից շատ շատերը: Բայց կայ խոր գղացում, ուժեղ շեշտ և արտասովոր մի գեղեցկութիւն ախողջ կառուցածքի մէջ:

Ուայլդը իր այլ հէքիաթում երևան է գալիս որպէս նոր կրօնի և նոր ծշմարտութեան մոլանտիկ: Իզուր չէ նա հէքիաթի վերջում գծում քաղաքային երկու տիրակալների, երկու խորհրդատուների տաղտկալի դէմքերը, որոնց առաջարկով տապալում է մերկացած Պրինցի արձանը:

— «Քանի որ նա այլևս գեղեցիկ չէ, հետևապէս օգտակար էլ չէ, ասաց գեղադիտութեան Պրոֆեսորը Համալսարանում»...

Չենք կանգնում Ուայլդի մնացեալ հէքիաթների վրայ, որոնցից մի քանիսը նկարագրւած են միևնոյն պարզ և ազդու ջեշտերով, համակւած են միևնոյն էթիքական կենսահայեցողութեամբ:

Իր հին մեղքերը «քաւում» է «Երջանիկ Պրինցը» յանուն Թոյլերի և Թշառների, յանուն բազմաթիւ տառապողների:

Իր մեղքերը «քաւում» է և «Եսասէր Հսկան»:

Ու հէքիաթներում գծում է տառապանքի ներքին
զեղեցկութիւնը ու վեհանմունքնան հմայքը:

Այդ հէքիաթներում, երևում են «Թշառները»
որոնց օգնելով ամեն ոք երջանկանում և զեղեցկա-
նում է:

Դա է Ուալլդի նոր հաւատամբը, նրա էստէտի-
քական-բարոյական կրօնը:

Եւ իհարկէ նրա այդ համոզումը կապած է ամե-
նասերտ կերպով այն կենսահայեցողութեան հետ,
որը ստեղծել է քաղքենի ինտելլիգենտների որոշ
շրջանում ժամանակակից միջավայրում, Կուի կոչելով
«Թշառներին» այդ ինտելլիգենտները չեն վստա-
հանում որովհետեւ դասակարգային հակամարտու-
թեան նրանք հակառակ են: Սակայն նրանք չեն կա-
րող նաեւ հաշտել տիրող կարգերի հետ, որովհե-
տեւ իշխողների և՛ կեանքը, և՛ մորալը և՛ էստէտի-
կան նրանց համար անընդունելի է:

Կան գործեր և երկեր, որոնք միշտ ունին իրենց
ուրույն յեղափոխական իմաստը:

Այդ երկերի հեղինակները լաճախ կապած են
հին սեփականատիրական կարգերի հետ: Սակայն
շնորհիւ բարձր զեղարւեստական տաղանդի նրանց
յաջողւել է ոչ միայն շնչտել որոշ յեղափոխական
էտայներ և դրամատիքական մօմենտներ այլ և
ստեղծել ըմբոստ տենչեր: Այդպէս են օրին, Վիկ

տոր Հիւզօի՝ «Թշառները», «Իննսու-ն և երե-
քը» կամ Եիլլերի՝ «Աւաղակներ»-ը կամ Ֆլո-
բերի՝ «Սենտիմենտալ դաստիարակութիւնը» և
այլն և այլն: Դրանք, այդ հեղինակները ոչ սոցիա-
լիստներ են և ոչ էլ յեղափոխականներ: Սակայն
այդ զեղազէտները չեն կարողացել և չեն ցանկա-
ցել հաշտել տիրող կարգերի, հնացած մօրալի և
քաբացած նորմաների հետ: Եւ դրանցից իւրաքան-
չիւրը ցուցադրել է ցայտուն կերպով իր բացասա-
կան վերաբերմունքը դէպի հին հասարակութիւնը
և հին կարգերը: Ու ամեն մէկը ստեղծել է այդ
կարգերի դէմ կուռ ապստամբների և գործիչների
բնորոշ և հետաքրքրական պօրտրէտներ: Ամեն
մէկը, և՛ Հիւզօն, և՛ Եիլլերը, և՛ Ֆլօբերը խիտ
զոյներով և ուժեղ զգացումով արտայայտել է իր
քնադատական ոգին...

Այդ պատճառով նոյնիսկ այժմ և այսօր այդ մեծ
զեղազէտների գործերը այժմէական են: Նրանց
գործերը բացի ներքին զեղարւեստական յատկու-
թիւններից ունին աշանձին արժէք ևս: Նրանց եր-
կերը մօտ են մեր օրերի սերունդին, որովհետեւ
գունաւորւած են որոշ ազատական ոգով:

Այսպէս են որոշ չափով նաեւ Ուալլդի առաջին
«Հէքիաթներ»-ը: Նրբահնչճին այդ դրուագները ունին
նոյն իսկ մեր օրերում դաստիարակչական որոշ
արժէք:

Մեծ անզլիական պօէտը պրօլետարական երգիչ

չէր և ոչ էլ յեղափոխական. Բայց նա հին հասարակութեան, ժամանակակից սեփականատիրական կարգերի, քաղքենիական մօրալի և աշխարհայեցողութեան ամենավճռական հակառակորդն էր: Ու իր այդ վերաբերմունքը նա չի ծածկել:

«Հէքիաթներ»-ից իւրաքանչիւրը «քաղաքացիական» իր իմաստն ունի: «Հէքիաթներ»-ը մի աւելորդ անգամ, խարաղանում են սոցիալական ներհակութիւնների և դասակարգային հակամարտութեան վրայ հիմնած հասարակութեան բացասական էութիւնը: Միւս կողմից Ուալլըր գծում է ընկերական ալտրուիստական ոգու մեծ էթիքական արժէքը: Ուալլըր այդ նկատի չի ունեցել: Գուցէ նա այլ մտայղացումներով է տոգորել: Կարելի է նոյնիսկ ասել, որ նա «Հէքիաթների» ստեղծագործութեան ժամանակ ևս մնացել է ինդիվիդուալիստ: Սակայն իրապէս նա, ինչպէս յաճախ պատահում է, ստեղծել է այնպիսի դրուագներ, որոնք ունեցել են միանգամայն այլ արժէք և նշանակութիւն...

Դրանով պիտի բացատրել այն, որ Ուալլըր Թէ այդ «Հէքիաթները» և Թէ նրա յայտնի «Ռէդինգեան Բանդի Բալլադը» սիրելի են ոչ միայն Ուալլըրի «էստէտ» երկրպագուներին, այլ և ամենալայն ժողովրդական և բանտրական աուդիտորիայի համար:

Ա. ԿԱՐՈՆՆԱՆ

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL1605794

504

1863